ա/ հոգ տանել Կազմակերպության հեղինակության մասին.

բ/ կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները.

գ/ մուծել մուտքի վճար և ամսական անդամավճար՝ Խորհրդի կողմից սահմանված լինելու դեպքում, որոնց չափն ու վճարման կարգը սահմանում է Խորհուրդը.

դ/ բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները.

4.3Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Կազմակերպության ժողովի կամ Խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողություն, Կազմակերպության անդամությունից զրկում:

5.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ՝ պետական գրանցման պահից:

5.2Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումներով կլոր կնիք, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա արժույթով, իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում: Կարող է ունենալ իր խորհրդանիշը:

5.3Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:

5.4Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

ա/ տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին.

բ/ հիմնադրել լրատվության միջոցներ.

գ/ կազմակերպել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր.

դ/ ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

ե/ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ իր կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների միջոցով.

զ/ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, վարձակալել և օգտագործել անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, օրենքով չարգելված այլ գույք.

է/ օտարել կամ վարձակալության կամ անվճար օգտագործման հանձնել Կազմակերպությանը պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք.

ը/ կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ.

թ/ ինքնուրույն կազմավորել և տնօրինել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում՝ արտարժույթով.

ժ/ իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, այդ թվում՝ կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ առևտրային և ոչ կառավարական կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային հասարակական կազմակերպություններին, իր անդամներին և այլ անձանց գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

6.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1Կազմակերպությունը պարտավոր է՝

ա/ ցանկացած ֆիզիկական անձի պահանջով յոթ օրացուցային օրվա ընթացքում նրան հնարավորություն տալ ծանոթանալու կազմակերպության կանոնադրությանը.

բ/օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում

գ/ իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության ժողովի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը.